**05.02. 2020թ. կնքված «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-71»**
պայմանագրում փոփոխություն/լրացում կատարելու վերաբերյալ

**համաձայնագիր № 10**

ք. Երևան 30 նոյեմբերի 2020թ.

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝ Ա.Վանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Պահապան 1» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Վանեցյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով քաղաքացիական օրենսդրությունը, Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը և № «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-71» պայմանագրի 7.15 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**Համաձայնագրի առարկան**

1. Հաշվի առնելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված զեկուցագիրը հետագա համագործակցության համար կողմերը որոշեցին 2020թ. փետրվարի 5-ին կնքված № «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-71» պայմանագրի մասով հաստատել՝
   - ✓ գնման ժամանակացույցի նոր տարբերակ՝ ըստ սույն համաձայնագրի հավելված № 1-ի,
   - ✓ վճարման ժամանակացույց ըստ սույն համաձայնագրի հավելված № 2-ի, որի միջոցով հատկացվում են համապատասխան ֆինանսական միջոցներ վճարման ժամանակացույցով նշված ծառայության ձեռք բերման համար:
2. Սույն համաձայնագիրը համարվում է № «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-71» գնման պայմանագրի անբաժանելի մաս:
3. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:
4. Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից. 1-ն էջը՝ սույն համաձայնագիր № 10-ն է, իսկ 2-3-րդ էջերը՝ սույն համաձայնագրի հավելվածներ №№ 1-ը և 2-ն են հայերեն լեզվով երկու օրինակից, որը ունի հավասարազոր իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ԱՆ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ | «Պահապան 1» ՍՊԸ |
| Հասցե՝ ք.Երևան, 0025, Մ.Հերացի 12 | Հասցե՝ ք. Երևան Ավան Քուչակ 16/2 |
| Բանկ՝ Կենտրոնական գանձապետարան | «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900018004649 | Հ/Հ՝ 1150019206166199 |
| ՀՎՀՀ 02625503 | ՀՎՀՀ՝ 00925301 |
| Գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝ Ա.Վանյան | Տնօրեն՝ Ա.Վանեցյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
Նոյեմբերի 2020թ. կնքված
№ 10 Համաձայնագրի

Հավելված N 1
05 փետրվարի 2020թ. կնքված
«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-71» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | | Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չ/ր | (CPV) | անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Չ/մ | ընդհանուր գինը* ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման հասցեն | մատուցման ժամկետը** | |
| 1 | 75241200 | Օբյեկտի պահպանության ծառայություն | Պատվիրատուի (այսուհետ՝ Պատվիրատու) հասցեն՝ ք.Երևան, Դավիթ Մալյան 37 Կատարողը՝ (այսուհետ՝ Կատարող) հանդիսանում է պահնորդական գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ: Ծառայության տեսակը՝ պահպանության ենթակա գույքի և անվտանգության պահպանում, անցագրային և ներօբեկտային պայմանակարգերի ապահովում, 24 ժամյա ամենօրյա /շաբաթվա բոլոր օրերին ներառյալ հանգստյան և տոնական օրերին/ պահնորդական ծառայության իրականացում՝ պարտադիր թվով 2 պահնորդ-ծառայողի ներկայության ապահովմամբ:<br>**<u>Կատարող ընկերությանը ներկայացվող պահանջներ՝</u>**<br>ա) պահնորդական գործունեության լիցենզիա,<br>բ) **օրինական տիրապետման տակ գտնվող ծառայողական զենքը ունենալու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի առկայություն,**<br>գ) ներկայացվող աշխատակիցների՝ պահնորդի կարգավիճակ ունենալու՝ պատրաստությունը /որակավորումը/ հավաստող փաստաթղթեր՝ տրված համապատասխան կրթական գործունեության լիցենզիա ունեցող հաստատությունների կողմից,<br>դ) ներկայացվող աշխատակիցների հատուկ պատրաստության՝ զենք պահելու ու կրելու թույլտվության վերաբերյալ.<br>**<u>Կատարող ընկերությանը վերապահված պարտականություններ</u>**<br>ա) յուրաքանչյուր հերթափոխի ընթացքում թվով 2 աշխատակիցներին անվտանգության միջոցների ապահովում՝ **ծառայողական զենք, ռետինե** մահակ, ձեռքի լապտեր, պահպանվող տարածքում կապի միջոցների՝ ահազանգման սարքավորումների հագեցվածություն, կառավարման կենտրոնի և հերթապահություն իրականացնող անձանց հետ մշտական օպերատիվ կապի հնարավորություն:<br>բ) յուրաքանչյուր հերթափոխի ընթացքում թվով 2 աշխատակիցներին տրամադրել կազմակերպության ապրանքային նշանով տարբերվող հատուկ համազգեստ և անձը հաստատող վկայական,<br>**<u>Կատարող Ընկերությունը՝</u>**<br>ա) նյութական պատասխանատվություն է կրում գողությամբ կամ հանրորեն վտանգավոր այլ արարքով պատվիրատուին (հասցված) պատճառված վնասի դեպքում, եթե վնասն առաջացել է կատարող ընկերության աշխատակցի կողմից պայմանագրի պայմանների խախտման արդյունքում:<br>բ) պատասխանատվություն է կրում ծառայություն իրականացնող պահնորդի որակավորման /ժամկետայնության պահպանման/, պատշաճ աշխատանքի համար,<br>**<u>Պահնորդին ներկայացվող պահանջներ՝</u>**<br>ա) նվազագույն միջնակարգ կրթություն<br>բ) տվյալ գործունեության բնագավառում աշխատանքային փորձի առկայություն,<br>գ) անհատական հատկանիշներ՝ մշտապես ներկայանալի արտաքին տեսք, հիգիենայի կանոնների խստագույն պահպանություն,<br>ե) շփման և վարվելակերպի պատշաճ պահպանություն՝ պաշտոնատար անձանց, աշխատողների և ֆիզիկական անձանց հետ.<br>զ) ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիության պահպանություն:<br><u>ՊԱՀՆՈՐԴԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</u> | դրամ | 9 900 000 | 1 | ք.Երևան, Դ.Մալյան 37 | 2020թ. հունվարի 31-ից 2020թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ | Ըստ Պատվիրատուի պահանջի 2021թ. հունվարի 1-ից մինչև 31-ը Լրացուցիչ համաձայնագրի հաստատման միջոցով |

* **Ծառայության մատուցման առավելագույն արժեք՝ 12 ամսվա ամբողջ ծավալով, որը կվերահաշվարկվի պայմանագրով սահմանվող ծառայությունների մատուցման փաստացի ժամկետների հիման վրա:**

** **Պահանջի առկայության դեպքում Պատվիրատուն կտեղեկացնի Կատարողին մեկ շաբաթ առաջ:**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ԱՆ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, 0025, Մ.Հերացի 12
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900018004649
ՀՎՀՀ 02625503
Գլխավոր տնօրենի պաշտոնակատար Ա.Վանյան

**ԿԱՏԱՐՈՂ**
«Պահապան 1» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան Ավան Քուչակ 16/2
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150019206166199
ՀՎՀՀ 00925301
Տնօրեն Ա.Վանեցյան

Հավելված N 2
30 նոյեմբերի 2020թ. կնքված
№ 10 Համաձայնագրի

Հավելված N 2
05 փետրվարի 2020թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-71» ծածկագրով պայմանագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ այդ թվում | | |
| | | | I կիսամյակ | II կիսամյակ | Ընդամենը |
| 1 | 75241200 | Օբյեկտի պահպանության ծառայություն (դեկտեմբեր) | 4,125,000 | 9,075,000 | 9,075,000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ԱՆ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, 0025, Մ.Հերացի 12
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900018004649
ՀՎՀՀ 02625503
Գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝ Ա.Վանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Պահապան 1» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան Ավան Քուչակ 16/2
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1150019206166199
ՀՎՀՀ՝ 00925301
Տնօրեն՝ Ա.Վանեցյան
(ստորագրություն)
Կ.Տ.